PROBLEMS AND DEVELOPMENT PROSPECTS OF THE RA HIGHER EDUCATION SYSTEM

Abrahamyan Ani
YSU, Armenia

Summary

The sphere of higher professional education being the basis of the intellectual potential of the society and the development of the economy is of strategic importance in the process of sustainable development of the states.

The present article portrays the problems of the sphere of higher professional education of the Republic of Armenia, based on the analysis of the legislation regulating the sphere. We have also studied the changes (outlining the development prospects and directions of the sphere) proposed by the draft law, which will significantly change the sphere of higher education, from structure to management. From the above study, it becomes obvious that all the ongoing and planned changes in the sphere of higher professional education in the Republic of Armenia are aimed at full integration into the European Higher Education Area.

Keywords: Higher education, education management, education financing, reforms, Bologna process, quality assurance, three-tier system, European Higher Education Area (EHEA), admissions system.

References:

1. RA Law on Higher and Postgraduate Professional Education, HO-62-N, 14.12.2004.
2. RA Law on Education, HO-297, 14.04.1999.
3. University Autonomy in Armenia, ATHENA, Analysis and Action Map, Armenia, 2012-2015.
4. Annex to the Decision N 597-N of the Government of the Republic of Armenia of April 26, 2012, procedure for admission to state-non-state higher educational institutions of the Republic of Armenia (according to the bachelor's educational program).
5. Strategy for Financing Higher Education of the Republic of Armenia, Appendix 1 to the Protocol Decision of the Government of the Republic of Armenia No. 25 dated June 30, 2011.
6. National Competitiveness Report of Armenia 2010, Challenges of Higher Education.
7. John Fielden, Global Trends in University Governance, Education Working Paper Series, Number-9.

Материал был представлен и отправлен на рецензию: 20.03.2021
Принято к публикации: 03.04.2021
Рецензент: канд. пед. наук, доцент Аревик Казарян

The material was submitted and sent to review: 20.03.20201
Was accepted for publication: 03.04.2021
Reviewer: Assoc. Prof., PhD. Arevik Khazaryan

378(479.25)

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Խաչատրյան Ռոբերտ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Հայաստան
Մովսիսյան Տաթև
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Հայաստան

Համառոտ ներածություն: Բարձրագույն կրթության ներկայիս բարեփոխումների համատեքստում առաջնահերթություն են դառնում կրթության որակի ապահովման գործընթացները: Վերջիններս նաև պայմանավորված են ԵԲԿՏ անդամ երկրներում բարձրագույն կրթության քաղաքականությունների, ռազմավարությունների ու օրենսդրական շրջանակների բազմընտրությունների առկայությամբ, բարձրագույն կրթության վերջնարդյունքների համադրելիության անհրաժեշտությամբ, ազգային և եվրո-

պական աշխատաշուկաներում տեղի ունեցող փոփոխություններով, կրթական ծառայությունների որակի նկատմամբ ոլորտի շահակիցների տարաբնույթ պահանջների ընդլայնմամբ, կրթության կառավարման գործընթացներում տեղեկատվական և հաղորդակցման ժամանակակից տեխնոլոգիաների արագընթաց զարգացման միտումներով: ԵԲԿՏ-ում շարունակաբար տեղի ունեցող նմանատիպ գործընթացները բարձրագույն կրթության համակարգերին առաջադրում են նոր մարտահրավերներ, որոնք ընդհանուր առմամբ նպատակաուղղված են կրթական ծառայությունների մրցունակության ու կրթության ազգային համակարգերի արդյունավետության բարձրացմանը: Հայաստանի Հանրապետությունը, հետամուտ լինելով 2005 թ. իր որդեգրած միջազգային պարտավորությունների կատարմանը և մրցունակ կրթության համակարգի գործառմանը, քայլեր է ձեռնարկում ԵԲԿՏ-ին լիարժեք ինտեգրվելու ուղղությամբ: Ուստի այս համատեքստում կարևորելով ՀՀ բարձրագույն կրթության եվրոպականացմանն ուղղված քայլերը՝ ոլորտային փաստաթղթերի և համապատասխան գործընթացների ուսումնասիրության ու վերլուծության միջոցով հնարավոր է հստակեցնել ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակի (ՀՀ ՈԱԱՇ) ձևավորման և շրջափուլային զարգացման նախադրյալները ԵԲԿՏ-ին ինտեգրման համատեքստում:

Բանալի բառեր: Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ), բարձրագույն կրթության որակի ապահովում, որակի ապահովման եվրոպական շրջանակ, որակի ապահովման ոլորտային հիմնախնդիրներ, ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակ:

Հիմնախնդիրը: Հետազոտության հիմնախնդիրը ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման շրջանակի ոչ արդյունավետ գործառումն է կրթության միջազգայնացման գործընթացների հարափոփոխության համատեքստում:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Բարձրագույն կրթության որակի ապահովումը, լինելով Բոլոնիայի գործընթացի թիրախային ուղղություններից մեկը, առանցքային դերակատարում ունի ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության համակարգերի թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացման, ակադեմիական շարժունության ընդլայնման, շնորհված որակավորումների համադրելիության ու փոխճանաչման, կրթական ծառայությունների վերջնարդյունքների չափելիության ապահովման գործընթացներում [1], [2], [5]: Ընդհանուր առմամբ, որակի ապահովումը բուհերի գործունեության արդյունավետության, ինչպես նաև բուհերի կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի նկատմամբ հանրային վստահության ձեռքբերման և ամրապնդման գործընթացների գնահատումն է՝ միտված ԵԲԿՏ-ում բուհերի գրավչությանն ու վարկանիշի բարձրացմանը: Վերոնշյալի մասին են վկայում 1999-2020 թթ. բոլոր նախարարական գագաթնաժողովներում ընդունված պաշտոնական փաստաթղթերը, որակի ապահովման գործակալությունների և ոլորտի տարբեր դերակատարների՝ մասնագետների, փորձագետների, մասնագիտացված կառույցների հետազոտությունները, բուհերի ինքնավերլուծությունները և արտաքին գնահատման զեկույցները, ինչպես նաև պետական նորմատիվային փաստաթղթերը (ներառյալ օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր, բարձրագույն կրթության ոլորտի քաղաքականություններ, ռազմավարություններ):

Հոդվածի նպատակը: Հետազոտության նպատակն է ներկայացնել ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակի ձևավորման և զարգացման նախադրյալները ԵԲԿՏ-ին ինտեգրման համատեքստում:

Գիտական նորույթը: Նորովի մեկնաբանվել են կրթական բարեփոխումների համատեքստում ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի զարգացման փուլերը, հստակեցվել են որակի ապահովման ոլորտի հիմնախնդիրները, ներկայացվել են ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակի սահմանումն ու նպատակները:

Հիմնական նյութի շարադրանքը: Հիմնվելով մասնագիտական գրականության և ոլորտային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների վրա՝ ՈԱ եվրոպական և հայկական շրջանակները ձևավորվել և զարգացել են տարբեր շրջափուլերով, որոնք մանրամասն ներկայացվում են ստորև:

Փուլ 1. Որակի ապահովման հարացույցի վերափոխում Եվրոպայում (մինչև 1999 թվականը)

Եվրոպայում բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացները մեկնարկել են տարբեր ժամանակահատվածներում (Արևմտյան Եվրոպայում՝ 1980-ական թթ. կեսերին, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում՝ կոմունիզմի անկումից հետո (մոտավորապես 1989 թ.)): Ըստ այդմ՝ մինչև 1999 թվականը Եվրոպայում կիրառվում էին ՈԱ տարբեր մոտեցումներ, սակայն հատվածական բնույթ էին կրում և պայմանավորված չէին միասնական հայեցակարգային կարգավորումներով: Մասնավորապես Արևմտյան Եվրոպայում կիրառվում էր բուհերի ինքնակառավարման մոդելը, մինչդեռ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում՝ բուհերի կառավարման կենտրոնացված և կարգադրական մոդելները: Կրթության զանգվածայնությամբ ու հատկապես կրթության կառուցվածքային բարեփոխումներով պայմանավորված՝ Եվրամիության ծրագրի (Multi-Country PHARE) շնորհիվ 1990-ական թթ. բուհերի կառավարման կենտրոնացված մոդելները վերափոխվեցին ինքնավար մոդելների՝ միևնույն ժամանակ մեծ տեղ հատկացնելով բարձրագույն կրթության համակարգերում հաշվետվողականության ու թափանցիկության գործընթացների ապահովմանը [6]:

Հարկ է նշել, որ նախքան 1990 թվականը եվրոպական միայն չորս երկրներ (Դանիա, Ֆրանսիա, Միացյալ Թագավորություն և Նիդերլանդներ) ունեին որակի արտաքին ապահովման մոդելներ: Մոդելները ներառում էին՝ ա) բուհերի ներկայացրած ինքնավերլուծությունների փորձաքննությունը, բ) փորձագիտական այցը և գ) փորձագիտական զեկույցը: Նույն ժամանակահատվածում որոշ այլ եվրոպական երկրներ (Ֆինլանդիա, Նորվեգիա) քայլեր էին ձեռնարկում ՈԱ ազգային համակարգեր ձևավորելու, մասնավորապես համապատասխան քաղաքականություններ, գնահատման չափանիշներ մշակելու և կրթության ՈԱ գործընթացների նպատակը հստակեցնելու ուղղություններով [6]:

Բոլոնիայի գործընթացի մեկնարկային փուլում մշակվեցին և ընդունվեցին կրթական բարեփոխումները կանոնակարգող կարևորագույն փաստաթղթեր՝ **«Լիսաբոնյան փոխճանաչման կոնվենցիան»** (1997թ.) և **«Սորբոնի հռչակագիրը»** (1998թ.): Վերջիններս նախատեսված էին ներդաշնակեցնելու եվրոպական երկրների բարձրագույն կրթության համակարգերը, մասնավորապես համեմատելու որակավորումների մակարդակներն ու շնորհվող դիպլոմները, դյուրացնելու ակադեմիական շարժունությունը և աշխատանք գտնելու հնարավորությունները՝ նպատակ ունենալով բարձրացնել կրթական ծառայությունների որակը, գրավչությունն ու մրցունակությունը Եվրոպայում:

Այսպիսով, ուսումնասիրելով Եվրոպայում տեղի ունեցած բարձրագույն կրթության կառուցվածքային և բովանդակային բարեփոխումները (մինչև 1999 թվականը)՝

կարելի է համարել որակի ապահովման հարացույցի վերափոխման ժամանակահատված, ինչը հիմք ծառայեց Բոլոնիայի գործընթացի մեկնարկի համար:

Փուլ 2. Որակի ապահովման փոխբմբռնելի հայեցակարգային շրջանակների մշակում (1999-2005 թթ.)

Որակի ապահովման գործընթացների կարևորությունն առավել ընդգծվել է Բոլոնիայի գործընթացի մեկնարկից ի վեր: 1999 թ. 29 եվրոպական երկրների կրթության նախարարների ստորագրած փաստաթղթում **(«Բոլոնիայի հռչակագիր»)** ամրագրվեցին 10 կարևորագույն սկզբունքներ, որոնք անհրաժեշտ էին մինչև 2010 թվականը բարձրագույն կրթության միասնական տարածք ստեղծելու համար: Սկզբունքներից մեկը որակի ապահովումն էր, որի միջոցով հնարավոր կլիներ աջակցել Բոլոնիայի գործընթացի անդամ երկրներին[1]՝ ընդլայնելու ակադեմիական շարժունությունը, համադրելի ու ճանաչելի դարձնելու բարձրագույն կրթության որակավորումները և որակի ապահովման գործընթացների արդյունքները: Ուստի ԵԲԿՏ ստեղծելու նպատակով հռչակագիրն ստորագրած երկրներին առաջադրվեց նոր խնդիր՝ «խթանել որակի ապահովման ոլորտում համագործակցությունը՝ մշակելով համադրելի չափանիշներ և մեթոդաբանություն»[2]:

Բարձրագույն կրթության համակարգերի համադրելիությունը, համակարգերի միջև փոխվստահության ձևավորումն ու համագործակցության ամրապնդումը, ինչպես նաև որակավորումների ճանաչման գործընթացներում ՈԱ միասնական մոտեցումների և հայեցակարգային փաստաթղթերի մշակման անհրաժեշտությունն ընդգծվեցին 2001 թ. ընդունված «**Սալամանկայի կոնվենցիայում»** և «**Պրահայի կոմյունիկեում»:** Մասնավորապես՝ «**Սալամանկայի կոնվենցիայով»** շեշտադրվեց, որ «որակի ապահովումը ԵԲԿՏ-ում վստահության ձևավորման և ամրապնդման, համակարգերի համադրելիության, շարժունության ընդլայնման, ներդաշնակության ու գրավչության բարձրացման առանցքային պայմաններից է»[3], իսկ «**Պրահայի կոմյունիկեով»** խրախուսվեց որակի ապահովման ոլորտում լավագույն փորձի փոխանակումն ու հավատարմագրման մեխանիզմների և որակի ապահովման գործընթացների արդյունքների փոխադարձ ընդունումը: Ուստի որակի ապահովման ուղղությամբ ձեռքբերումներ արձանագրելու համար բարձրագույն կրթության ոլորտի առանցքային դերակատարների առջև խնդիր դրվեց ստեղծելու բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական շրջանակ՝ այդպիսով նպատակ ունենալով աջակցել ԵԲԿՏ անդամ երկրներին մշակելու և կիրառելու բարձրագույն կրթության որակի ապահովման միասնական մոտեցումներ[4]: **Որակի ապահովման եվրոպական շրջանակը** որակի ապահովման գործընթացների ընդհանրական շրջանակ է, որը փոխկապակցում է ԵԲԿՏ անդամ երկրների կրթության ազգային համակարգերը՝ ապահովելով այդ համակարգերի միջև համահունչությունը, փոխվստահությունը և ըմբռնումը: Շրջանակի առանցքային *նպատակներն են՝* 1) բարձրացնել ԵԲԿՏ անդամ երկրների

---

[1] Ներկայումս Բոլոնիայի գործընթացին անդամակցում են 49 երկիր:

[2] «Բոլոնիայի հռչակագիր» (1999 թ.), https://ehea.info/Upload/document/ministerial_declarations/1999_Bologna_Declaration_English_553028.pdf:

[3] «Սալամանկայի կոնվենցիա» (2001 թ.), http://ehea.info/cid100310/convention-of-european-higher-education-institutions.html:

[4] «Պրահայի կոմյունիկե» (2001 թ.), http://www.ehea.info/Upload/document/ministerial_declarations/2001_Prague_Communique_English_553442.pdf:

բարձրագույն կրթության համակարգերի թափանցիկությունը, հաշվետվողականությունը և համագործակցությունը, 2) խթանել բարձրագույն կրթության համակարգերի միջև փոխվստահությունը, ակադեմիական շարժունությունը, 3) դյուրընթեռնելի, համեմատելի դարձնել որակի ապահովման ազգային համակարգերը և նպաստել որակավորումների և կրթական վերջնարդյունքների փոխճանաչմանը, 4) բարձրացնել կրթական ծառայությունների գրավչությունը ԵԲԿՏ-ում: ՈԱ եվրոպական շրջանակը ներառում է որակի ապահովման ոլորտի բոլոր սուբյեկտները, որակի ապահովման մեթոդաբանությունը, չափանիշներն ու ուղենիշները, ինչպես նաև հավատարմագրման գործընթացների կատարողականի գնահատման ցուցիչները: Որակի ապահովման եվրոպական շրջանակը հիմք է ծառայում Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների որակի ապահովման ազգային շրջանակների մշակման և համակարգերի ձևավորման համար՝ պահպանելով այդ երկրների բարձրագույն կրթության ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված տարբեր մոտեցումներն ու գործընթացները:

Հաշվի առնելով 1999 թվականից ի վեր ԵԲԿՏ-ում ոլորտային ձեռքբերումներն ու խնդիրները՝ 2003 թ. Բեռլինում կրթության նախարարները կարևորեցին բուհերի ինստիտուցիոնալ ինքնավարությունը և որոշումների կայացման գործընթացներում ուսանողների՝ որպես կրթության ոլորտի առանցքային շահակիցների մասնակցությունը: Արդյունքում «**Բեռլինի հռչակագրում»** (2003 թ.) ամրագրվեց այն դրույթը, որ «բարձրագույն կրթության որակի ապահովման համար անմիջական պատասխանատուն կրթական հաստատությունն է»[5]՝ դրանով իսկ վերաարժևորելով կրթական հաստատությունների դերը բարձրագույն կրթության ոլորտի և, ընդհանուր առմամբ, պետության ու տնտեսության զարգացման գործում: Այսպիսով, մինչև 2005 թվականը բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային համակարգը պետք է ներառեր. ա) որակի ապահովման ոլորտի կազմակերպությունների ու կրթական հաստատությունների պատասխանատվությունների շրջանակը, բ) ծրագրերի և/կամ հաստատությունների գնահատումը, ներառյալ ներքին և արտաքին գնահատումը, որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցությունն ու արդյունքների հրապարակումը, գ) հավատարմագրման, լիցենզավորման կամ նույնաբնույթ մեխանիզմերի համակարգը և դ) միջազգային համագործակցությունը և որակի ապահովման եվրոպական ցանցերին ազգային համակարգերի անդամակցումը [տե՛ս 5]:

Փուլ 3. Որակի ապահովման գործընթացների արդյունքների փոխճանաչում (2005-2015 թթ.)

Եվրոպայում որակի ապահովման գործընթացների պաշտոնական մեկնարկը տրվել է 2005 թ., երբ Բերգենում կրթության նախարարներն ընդունեցին Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշները (ՈԱԵՉՈՒ): ՈԱԵՉՈՒ-ն ուղղորդող փաստաթուղթ է և Բոլոնիայի գործընթացի անդամ երկրներում որակի ապահովման ազգային համակարգերի ձևավորման, գործառման, գնահատման և հետագա բարելավման մեթոդաբանական հենքն է: Ուշագրավ է, որ 2005 թվականից ի վեր ՈԱԵՉՈՒ-ն դարձել է ԵԲԿՏ-ում կրթական բարեփոխումների իրականացման առաջմղիչ գործիքներից մեկը, որի կիրառման արդյունքում զգալի ձեռքբերումներ արձանագրվեցին որակի ներքին և արտաքին ապահովման համա-

[5] «Բեռլինի կոմյունիկե» (2003 թ.), http://www.ehea.info/Upload/document/ministerial_declarations/2003_Berlin_-Communique_English_577284.pdf:

կարգերի ներդրման ու շարունակական զարգացման, որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցության և միջազգային համագործակցության ուղղություններով [4]: Այնուհետև՝ 2007 թ., Լոնդոնում կրթության նախարարները, արժևորելով E4 խմբի կազմակերպած ՈԱ առաջին համաժողովը եվրոպական համագործակցության բարձրացման և հատկապես փորձի փոխանակման նպատակով, խրախուսեցին որակի ապահովման ամենամյա համաժողովների կազմակերպումը: Ըստ նախարարների՝ նմանատիպ միջոցառումները հնարավորություն կտային նաև հետագայում ԵԲԿՏ անդամ երկրներին տեղեկանալու ոլորտի հիմնախնդիրների և հետագա զարգացման միտումների մասին: 2007 թ. նաև ստեղծվեց Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական գրանցամատյանը (EQAR)[6], որը պաշտոնապես գործարկվեց 2008 թ. և հետագայում դարձավ Եվրոպայում բարձրագույն կրթության համակարգերի միջև թափանցիկության ապահովման գործիքներից մեկը («**Լոնդոնի կոմյունիկե»**)[7]՝ հասանելի դարձնելով գրանցամատյանում գրանցված որակի ապահովման գործակալությունների գործունեության և բուհերի հավատարմագրման արդյունքների վերաբերյալ տեղեկությունները:

Կրթական բարեփոխումներով պայմանավորված՝ բարձրագույն կրթության համակարգերին առաջադրված նոր մարտահրավերների[8] հաղթահարման նպատակով անհրաժեշտություն առաջացավ նախևառաջ վերանայելու բարձրագույն կրթության ՈԱ եվրոպական համակարգին ներկայացվող պահանջները: Ուստի 2012 թվականից **(«Բուխարեստի կոմյունիկե»)**[9] սկսվեցին ՈԱԵՁՈՒ-ի վերանայման աշխատանքները, որի վերջնական տարբերակն ընդունվեց 2015թ. Երևանում կայացած նախարարական գագաթնաժողովի ժամանակ **(«Երևան կոմյունիկե**)»[10]:

Այսպիսով, ուսումնասիրելով որակի ապահովման գործընթացների զարգացման դինամիկան և ոլորտում արձանագրված ձեռքբերումները՝ մինչև 2007 թվականը կարելի է համարել որակի ապահովման եվրոպական շրջանակի հստակեցման, մինչդեռ 2008-2015 թվականները՝ այդ շրջանակի շուրջ համախմբվելու և որակի ապահովման ազգային համակարգերն արդյունավետ գործառելու ժամանակահատված:

2005-2015 թթ. կրթական բարեփոխումների ժամանակահատված էր նաև ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում: Նախ 2004 թ. դեկտեմբերի 14-ին ՀՀ Ազգային ժողովը Ն-167-3 որոշմամբ վավերացրեց «Լիսաբոնյան փոխճանաչման կոնվենցիան», որն իրավական հիմք հանդիսացավ 2005 թ. Բոլոնիայի գործընթացին անդամակցելու և «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի (ԱՓՇՏԱԿ)՝ որպես շնորհված որակավորումները պաշտոնապես ճանաչող կառույցի ստեղծման համար: Այնուհետև՝ 2005 թ., պաշտոնապես

---

[6] The European Quality Assurance Register for Higher Education.

[7] «Լոնդոնի կոմյունիկե» (2007 թ.), https://ehea.info/Upload/document/ministerial_declarations/2007_London_Communique_English_588697.pdf:

[8] Նշված ժամանակահատվածում ոլորտի նոր մարտահրավերներն էին ստեղծարարությունը, ժամանակակից դասավանդման և գնահատման մեթոդների կիրառումը, որակավորումների ճանաչումը, կրթական ծրագրերի և անդրազգային կրթության որակի ապահովումը, ձեռնարկատիրական հմտությունների զարգացումը, բարձրագույն կրթության սոցիալականացումը, միջազգայնացման նպատակով նոր ռազմավարություններ մշակելու անհրաժեշտությունը, հետազոտահենք կրթության իրականացումը:

[9] «Բուխարեստի կոմյունիկե» (2012 թ.), https://ehea.info/Upload/document/ministerial_declarations/Bucharest_-Communique_2012_610673.pdf

[10] «Երևանի կոմյունիկե» (2015թ.), https://ehea.info/Upload/document/ministerial_declarations/YerevanCommuniqueFinal_613707.pdf:

հաստատվեց Հայաստանի անդամակցությունը Բոլոնիայի գործընթացին («Բերգենի կոմյունիկե»), որին հաջորդեց ՀՀ կառավարության կողմից բարձրագույն կրթության միջազգայնացման և ԵԲԿՏ-ի սկզբունքների իրագործման նպատակով գործողությունների պլան-ժամանակացույցի հաստատումը (2006 թ.)[11]: Այս համատեքստում պետք է նշել, որ մինչև 2007 թվականը որակի վերահսկման և հավատարմագրման գործընթացներն իրականացվում էին ՀՀ Կրթության և գիտության նախարարության (ներկայումս՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն) կողմից: Նշված ժամանակահատվածում բուհերի լիցենզավորումն ու հավատարմագրումն իրականացվում էին նույն պահանջներով՝ արդյունքում բուհերին տրամադրելով անժամկետ փաստաթղթեր: Ուստի կարելի է ենթադրել, որ երկու գործընթացներն ունեին նաև նույնատիպ նպատակներ ու վերջնարդյունքներ, ինչը փաստացի խոչընդոտում էր ՀՀ բարձրագույն կրթության համակարգի արդյունավետ գործառմանը և ԵԲԿՏ-ի որակի ապահովման գործընթացներին Հայաստանի ինտեգրմանը:

Հետամուտ լինելով Եվրոպայում տեղի ունեցող իրադարձություններին և ուսումնասիրելով որակի ապահովման եվրոպական մոտեցումները՝ Հայաստանում աստիճանաբար ձեռնարկվեցին և իրականացվեցին բազմափուլ գործընթացներ եվրոպական չափանիշներին համապատասխան բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակի (ՈԱԱՇ) ձևավորման ուղղությամբ: Մասնավորապես 2008 թ. ՀՀ կառավարության N 1486-Ն որոշմամբ հիմնադրվեց և 2009 թ. պաշտոնապես գործեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՈԱԱԿ): ՈԱ համակարգի ներդրման նպատակով ՈԱԱԿ-ի հիմնադրումից հետո մեկնարկվեցին փաստաթղթային փաթեթների մշակման աշխատանքները: Արդյունքում 2011 թ. ՀՀ կառավարության որոշումներով հաստատվեցին ՀՀ հավատարմագրման չափանիշներն (N959-Ն) ու ՈԱ գործընթացները կանոնակարգող «ՀՀ-ում մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգը (N 978-Ն), ՈԱԱԿ-ը մշակեց բուհերում որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղեցույցը, ՀՀ բարձրագույն կրթության փորձագիտական ձեռնարկը և առանցքային այլ փաստաթղթեր: ՈԱԱՇ-ի մշակմանը զուգահեռ ՈԱ համակարգի ձևավորման համար գրեթե բոլոր բուհերում ստեղծվեցին առանձին կառուցվածքային ստորաբաժանումներ, երկրում աստիճանաբար իրականացվեցին որակի ապահովման մեխանիզմների մշակման ու կիրառման աշխատանքներ: Ոլորտի հիմնախնդիրներն ու հետագա զարգացումները քննարկելու նպատակով ՈԱԱԿ-ը տարբեր ձևաչափերով պարբերաբար կազմակերպեց և անցկացրեց աշխատաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ ու վերապատրաստումներ, ինչպես նաև իրականացրեց ՀՀ 11բուհերի ինստիտուցիոնալ փորձնական հավատարմագրումներ[12]:

Ընդհանուր առմամբ **«ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակը» (ՈԱԱՇ)** կարելի է սահմանել որպես բարձրագույն կրթության որակի ապահովման սուբյեկտների, վերջիններիս լիազորությունների ու պարտավորությունների, որակի ապահովման քաղաքականությունների ու ռազմավարությունների,

---

[11] «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության N43 արձանագրության որոշում՝ http://www.irtek.am/views/act.aspx?aid=36551%20:

[12] ՈԱԱԿ, ՀՀ մասնագիտական կրթության համակարգի վերաբերյալ ՈԱԱԿ-ի 2009-2011 թթ. առաջին ամբողջական վերլուծություն, Երևան, 2012, էջ 9:

բուհերի լիցենզավորման և հավատարմագրման պետական չափանիշների, բուհերի գործունեության ու կրթական ծրագրերի ներքին և արտաքին գնահատման ու որակի ապահովմանն առնչվող բոլոր գործընթացների և մեխանիզմների ամբողջություն՝ հիմնված ՀՀ կրթության օրենսդրության, ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերի, ոլորտի դերակատարների լիազորությունների և պարտականությունների, ինչպես նաև ՈԱԵՉՈՒ-ի պահանջների վրա: Ըստ այդմ՝ ՀՀ ՈԱԱՇ-ի *նպատակն* է՝ 1) փոխկապակցել բարձրագույն կրթության որակի ապահովման բոլոր սուբյեկտների գործունեությունը, 2) ապահովել այդ սուբյեկտների միջև փոխվստահությունը, համագործակցությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, 3) նպաստել որակի մշակույթի տարածմանը և զարգացմանը պետական ու եվրոպական մակարդակներում և 4) ՈԱ գործընթացները համապատասխանեցնել ոլորտի շահակիցների ակնկալիքներին ու պահանջներին: Շրջանակի գործառումն ապահովվում է այնպիսի մեխանիզմներով, ինչպիսիք են՝ կրթական ծրագրերի լիցենզավորումը, բուհերի ինքնավերլուծությունները, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումներն ու մշտադիտարկումները, շնորհված որակավորումների ճանաչումը: Հարկ է նաև նշել, որ ՈԱԱՇ-ը հիմնվում է որակի կառավարման համընդհանուր սկզբունքների վրա, որը հնարավորություն է տալիս ներկայացնելու որակի ներքին և արտաքին գործընթացների փոխկապվածությունը, ուսումնասիրելու ու գնահատելու տարբեր տիրույթներում որակի ապահովման առանցքային սուբյեկտների գործունեությունը, դուրս բերելու ոլորտում առկա խոչընդոտներն ու թերությունները և մատնանշելու դրանց բարելավմանն ուղղված քայլերը:

Թեպետ 2005-2014 թթ. Հայաստանում առաջընթաց գրանցվեցին ՈԱԵՉՈՒ-ին համապատասխան կրթության որակի ապահովման համակարգի ներդրման ու գործառման, բուհերում որակի մշակույթի ձևավորման ու տարածման և ՈԱԱԿ-ի միջազգային ճանաչման ուղղություններով, այնուամենայնիվ բուհերի ինքնավարության ու հաշվետվողականության ցածր մակարդակը, կրթական ծրագրերի ոչ լիովին համապատասխանեցումը Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ)[13] բնութագրիչներին, պրակտիկաների, գնահատման համակարգի անարդյունավետությունը և ԵԲԿՏ-ի գործիքակազմի ոչ համակարգված ու ճշգրիտ կիրառումը մնացին ոլորտի հիմնախնդիրները [1]:

Փուլ 4. ԵԲԿՏ-ում որակի մշակույթի հետագա զարգացում (2015 թվականից մինչ օրս)

ԵԲԿՏ անդամ երկրների բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգերին առաջադրված նոր մարտահրավերներին արձագանքելու, ՈԱ գործընթացները կատարելագործելու, բարձրագույն կրթությունն առավել արժեքորելու և վերահմաստավորելու նպատակներով 2015 թվականից մեկնարկեց որակի ապահովման եվրոպական գործընթացների նոր շրջափուլը: Երևանում կրթության նախարարներն ընդունեցին ՈԱԵՉՈՒ-ի վերանայված տարբերակը, որն առաջարկում էր բուհերին որդեգրել և կիրառել բարձրագույն կրթության բովանդակության արդիականացմանը միտված նոր մոտեցումներ, որոնք պետք է դրվեին ՈԱ գործընթացների հիմքում՝ այդպիսով նպատակ ունենալով բարձրացնել բարձրագույն կրթության ազգային համակարգերի մրցու-

[13] ՀՀ որակավորումների ազգային շրջանակը մշակվել և հաստատվել է 2011թ. (ՀՀ կառավարության N 332-Ն որոշում): Ներկայումս գործող ՈԱՇ-ը հաստատվել է 2016 թ. (ՀՀ կառավարության N 714-Ն որոշում):

նակությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ազգային և միջազգային մակարդակներում: Այդ մոտեցումներն էին՝ ա) կրթական գործունեության ուսանողակենտրոն ուսուցումը, բ) մասնագիտական որակավորումների փոխճանաչումը, գ) վերջնարդյունքահենք կրթական ծրագրերի համապատասխանությունը ԵԲԿՏ որակավորումների շրջանակին (ԵԲԿՏ ՈՇ)[14], Որակավորումների եվրոպական շրջանակին (ՈԵՇ)[15], իսկ պետական մակարդակներում՝ ՈԱՇ-ին, դ) հետազոտահենք կրթության խրախուսումը, ե) նորարարության, քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը, զ) ուսումնառողներին լրացուցիչ խորհրդատվական և օժանդակման ծառայությունների տրամադրումը, է) որակի համընդհանուր կառավարման սկզբունքների վրա հիմնված ՈԱ գործընթացների իրականացումը, ը) ՈԱ գործընթացներում կրթության ոլորտի առանցքային շահակիցների ներգրավման անհրաժեշտությունը, թ) կրթության կառավարման բոլոր գործընթացներում կրթության որակի բարելավմանը միտված տարբեր մոտեցումների կիրառումը, ժ) կրթական գործընթացների արդյունավետ կազմակերպման նպատակով բուհերի՝ համապատասխան ռեսուրսներով (մարդկային, ֆինանսական, նյութական, կրթական և այլն) ապահովվածությունը, ժա) ուսումնառողների առաջընթացին նպաստող միջոցառումների կազմակերպումը և իրականացումը, ժբ) ՈԱ գործակալությունների անկախ գործելառճը [8]: Հետագայում ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության համակարգերի միջև վստահություն ապահովելու, հավատարմագրման գործընթացները կատարելագործելու նպատակով գործառության մեջ դրվեցին «կարճաժամկետ որակավորումներ», «որակավորումների ավտոմատ ճանաչում», «համատեղ կրթական ծրագրերի որակի ապահովում» հասկացությունները, որոնք կնպաստեին ուսանողների ու շրջանավարտների ազատ տեղաշարժմանն ու ԵԲԿՏ-ում աշխատելուն **«Փարիզի կոմյունիկե»**[16]:

2015 թվականից ի վեր ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում ևս գրանցվել են դրական միտումներ, ինչպիսիք են, օրինակ, բոլոր պետական բուհերում որակի ներքին ապահովման համակարգերի ներդրումը և գործառումը, բոլոր բուհերում որակի մշակույթի տարածումը, ուսանողների կրթական առաջադիմության գնահատման արդյունավետության բարձրացման, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը խթանելու ուղղություններով միջոցառումների իրականացումը, հավատարմագրումների արդյունքների հիման վրա բուհ-աշխատաշուկա համագործակցային կապի հնարավորությունների ընդլայնումը, կրթական ծրագրերի բովանդակության վերանայումները: Այդուհանդերձ, բարձրագույն կրթության ոլորտում դեռևս առկա են առանցքային խնդիրներ որակավորումների փոխճանաչման, ակադեմիական շարժունության, կրթական ծրագրերի բովանդակության արդիականացման, բուհերի գործունեության հաշվետվողականության ու թափանցիկության, կրթական գործընթացները կազմակերպելու նպատակով համապատասխան ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, նյութատեխնիկական և այլ) առկայության ու կիրառման, ԵԲԿՏ գործիքակազմի կիրառման, որակի ներքին ապահովման գործընթացներում բուհերի շահակիցների մասնակցության, որակի արտաքին գործընթացներում փորձառու փորձագետների ներգրավման, որակի ապահովման գործընթացների

[14] ԵԲԿՏ ՈՇ-ն ընդունվել է 2005 թ. Բերգենում կայացած նախարարական գագաթնաժողովում, այնուհետև վերանայվել և ընդունվել է Փարիզում 2018 թ.:

[15] Որակավորումների եվրոպական շրջանակն ընդունվել է 2008 թ. Եվրախորհրդարանի կողմից:

[16] «Փարիզի կոմյունիկե» (2018 թ.), http://www.ehea.info/Upload/document/ministerial_declarations/EHEAParis2018_Communique_final_952771.pdf:

նկատմամբ վստահության ամրապնդման և մի շարք այլ ուղղություններով, որոնք խոչընդոտում են Բոլոնիայի սկզբունքների լիարժեք իրագործմանը [2], [3]:

Այսպիսով, ուսումնասիրելով ԵԲԿՏ-ում ոլորտային բարեփոխումների ընթացքը՝ ստորև բերված աղյուսակում համադրվում են ՈԱ եվրոպական և հայկական շրջանակների ստեղծումն ու շրջափուլային զարգացումը:

Որակի ապահովման եվրոպական և ազգային գործընթացների մեկնարկն ու զարգացումը ԵԲԿՏ-ում (1999-2020 թթ.)	
1999-2005 թթ.	
Եվրոպա	**Հայաստան**
1.ՈԱ ոլորտում եվրոպական համագործակցության գործընթացների մեկնարկում և փաստաթղթերի ստեղծում, 2. ԵԲԿՏ-ում վստահության ձևավորման և ամրապնդման, համակարգերի համադրելիության, շարժունության ընդլայնման ու կրթության գրավչության բարձրացման նպատակով ՈԱ միասնական մոտեցումների մշակման խրախուսում, 3. Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների միջև փոխադարձ վստահության վրա հիմնված համագործակցություն, գնահատման և/կամ հավատարմագրման մեխանիզմների կիրառման լավագույն փորձի ներկայացում, 4. եվրոպական, ազգային և բուհերի ինստիտուցիոնալ մակարդակներում ՈԱ համակարգի կառուցվածքի նախագծում, 5. ՈԱԵՉՈՒ-ի և ԵԲԿՏ ՈՇ-ի մշակում:	1. «Լիսաբոնի կոնվենցիայի» վավերացում (2004թ.) և Բոլոնիայի գործընթացին անդամակցելու և ԱՓՇՏԱԿ-ի հիմնադրման նախապատրաստական փուլ, 2. բարձրագույն կրթության ռազմավարության, քաղաքականության մշակման աշխատանքներ, 3. լիզենզավորման և հավատարմագրման գործընթացների իրականացում կրթության ոլորտի լիազոր մարմնի կողմից:
(2005-2015 թթ.)	
1. ՈԱԵՉՈՒ-ի և ԵԲԿՏ ՈՇ-ի ընդունում (2005թ.), 2. ՈԱ գրանցամատյանի հիմնադրում (2007 թ.), 3. ՈԵՇ-ի ընդունում (2008 թ.), 4.ՈԱԵՉՈՒ-ի կիրառում՝ որպես ՈԱ ոլորտում բարեփոխումների իրականացման և կրթության թափանցիկության գործիք, 5. ՈԵՇ-ի մշակում և հաստատում (2008 թ.), 6. որակի ապահովում՝ որպես շնորհված որակավորումների ճանաչման կարևորագույն մեխանիզմ, 7. 2005 թ. ՈԱԵՉՈՒ-ի վերանայում:	1. Բոլոնիայի գործընթացին անդամակցություն (2005 թ.), 2. ԱՓՇՏԱԿ-ի հիմնադրում (2005 թ.), 3. ՈԱԱԿ-ի հիմնադրում (2008 թ.), 4. ՀՀ ՈԱ նոր չափանիշների մշակում ու հաստատում, ՈԱ գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի մշակում և հաստատում (2011 թ.), 5. ՀՀ ՈԱՇ-ի մշակում և հաստատում (2011 թ.) 6. ՈԱ ներքին մեխանիզմների մշակում և իրականացում, որակի մշակույթի ձևավորում և տարածում, 7. բուհերի հավատարմագրման գործընթացների նախապատրաստական փուլ, փորձնական հավատարմագրումներ, 8. Պետական և եվրոպական մակարդակներում համագործակցությանն ուղղված քայլեր (վերապատրաստումներ, աշխատաժողովներ, մի-

	ջազգային կառույցներին ՈԱԱԿ-ի անդամակցության նախապատրաստական աշխատանքներ):
(2015 թվականից մինչ օրս)	
1. ՈԱԵՉՈՒ-ի վերանայված տարբերակի ընդունում և 2015 թ. ՈԱԵՉՈՒ-ին ՈԱ ազգային համակարգերի համապատասխանեցման խրախուսում, 2. համատեղ ծրագրերի ՈԱ եվրոպական մոտեցման խրախուսում, 3. դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների որակի բարելավումը՝ որպես ԵԲԿՏ հիմնական առաքելություն, 4. կրթական ծրագրերի որակի ապահովում, 5. կրթական ծրագրերի մշակման և ՈԱ գործընթացներում շահակիցների ներգրավում, 6. որակի ապահովման գործընթացներում որակավորումների ճանաչման, փոխադարձ վստահության և շարժունության բարձրացման հնարավորությունների խրախուսում, 7. որակավորումների ճանաչման և ՈԱ գործընթացների փոխկապակցում, 8. ԵԲԿՏ թափանցիկության գործիքների ճշգրիտ կիրառման խրախուսում:	1. Բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրումներ, 2. ՀՀ ՈԱԾ-ի վերանայում և հաստատում (2016 թ.), 3. ՈԱ շահակիցների միջև համագործակցություն, 4. Ոլորտային կրթական հաստատությունների ընդգրկում հավատարմագրման գործընթացներում, 5. Հավատարմագրումների պետական գրանցամատյանի ստեղծում, 6. միջազգային համագործակցային կապերի ամրապնդում, անդամակցում ՈԱ միջազգային կառույցներին, 7. ՈԱ՝ որպես բուհերի ռազմավարական առաջանահերթության սահմանում:

Աղյուսակ 1. **Որակի ապահովման եվրոպական և հայկական շրջանակների ձևավորման ու զարգացման փուլերի համադրումը (1999-2020 թթ.)**

Եզրակացություն: Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է փաստել, որ ԵԲԿՏ-ին ինտեգրվելու նպատակով Հայաստանը բազմափուլ և մեծածավալ աշխատանքներ է իրականացրել որակի ապահովման գործընթացներում եվրոպական մոտեցումների կիրառման ուղղությամբ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգում առկա խնդիրները մեծապես պայմանավորված են կրթության օրենսդրական ու ենթաօրենսդրական կարգավորման խնդիրների, լիցենզավորման ու հավատարմագրման չափանիշների չվերանայման և որակի ապահովման գործընթացներում Բոլոնիայի գործընթացի ներկայիս զարգացումների չարտացոլման հանգամանքներով, ինչն էլ խոչընդոտում է բարձրագույն կրթության մրցունակության բարձրացումը և ԵԲԿՏ-ին ՀՀ ամբողջական ինտեգրումը: Հետևաբար դեռևս համալիր միջացառումներ պետք է նախաձեռնվեն և իրականացվեն՝ որակի ապահովման գործընթացները նպատակային իրականացնելու ու այդ գործընթացներում ներկայիս իրողություններն արտացոլելու համար: Ինչ վերաբերում է որակի ապահովման եվրոպական շրջանակի և ՈԱԱԾ-ի ուսումնասիրությանը, ապա պետք է նշել, որ ուսումնասիրված շրջանակներն ունեն համանման նպատակներ և անցել են զարգացման բավականին երկար ժամանակահատված: Որակի ապահովման եվրոպական շրջանակը կիրառվում է լավագույնս միավորելու, թափանցիկ և վստահելի դարձնելու Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների որակի ապա-

հովման համակարգերը, մինչդեռ որակի ապահովման ազգային շրջանակը՝ ներկայացնելու բարձրագույն կրթության համակարգի առանձնահատկություններն ու ապահովելու կրթության ոլորտի առանցքային սուբյեկտների գործունեության փոխկապակցվածությունը:

Այսպիսով, ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի գերակա նպատակներն իրականացնելու, պետական և եվրոպական մակարդակներում որակի ապահովման գործընթացների նկատմամբ վստահության մակարդակը բարձրացնելու և, ընդհանուր առմամբ, որակի ապահովման ազգային շրջանակը գործնականում կիրառելի դարձնելու նպատակներով առաջարկվում է վերանայել բարձրագույն կրթության ոլորտի ռազմավարությունը, լիցենզավորման և հավատարմագրման պետական չափանիշները, ինչպես նաև հստակեցնել որակի ապահովման գործընթացներում ոլորտի սուբյեկտների պարտականություններն ու լիազորությունները՝ դարձնելով բարձրագույն կրթությունն առավել մրցունակ և գրավիչ Հայաստանում ու ԵԲԿՏ-ում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բուդաղյան Ա., Սարգսյան Յու., Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում (զեկույց), Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Երևան, «Փրինթինֆո», 2012:
2. Խաչատրյան Ռ., Մովսիսյան Տ., ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման հիմնախնդիրները ԵԲԿՏ-ին ինտեգրման համատեքստում, «Կրթությունը 21-րդ դարում», Երևան, 2020, 1(3):
3. Խաչատրյան Ռ., Մովսիսյան Տ., Որակի ապահովման եվրոպական և ազգային չափանիշների համադրման առանձնահատկությունները ՀՀ բարձրագույն կրթության համատեքստում, «Կրթությունը 21-րդ դարում», Երևան, 2020, 2(4), էջ 29-30:
4. Bologna Follow-up Group. Bologna Process Stocktaking Report 2007, London, 2007.
5. European Commission, EACEA & Eurydice. The European Higher Education Area in 2018: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union, 2018.
6. European Commission, EACEA & Eurydice. The European Higher Education Area in 2020: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union, 2020, p. 62-63.
7. European Union Association Report. Trends V: Universities Shaping the European Higher Education Area. EUA Publication, 2007.
8. Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ESG), 2015, Brussels, Belgium.

ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ НАЦИОНАЛЬНОЙ РАМКИ ОБЕСПЕЧЕНИЯ КАЧЕСТВА ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РА

Хачатрян Роберт

Государственный университет им. В. Брюсова, Армения

Мовсисян Татев

Государственный университет им. В. Брюсова, Армения

Аннотация

В статье представлена динамика формирования и развития Национальной рамки обеспечения качества высшего образования РА, а также выявляются достижения, проблемы и вызовы в области обеспечения качества в контексте ЕПВО. Согласно результатам исследования, Армения приложила большие усилия для применения европейского подхода в процессах обеспечения качества высшего образования. В то же время следует отметить, что проблемы в системе обеспечения качества высшего образования во многом обусловлены проблемами законодательного регулирования системы образования: не были пересмотрены критерии лицензирования и обеспечения качества высшего образования, более того, текущие реформы ЕПВО не нашли отражения в процессах обеспечения

качества высшего образования РА. Следовательно, для того чтобы процессы обеспечения качества стали целенаправленными и отражали текущие тенденции, необходимо принятие более комплексных мер. Данное исследование также показывает, что несмотря на схожесть целей и довольно длительный период развития двух изученных рамок, для успешной реализации приоритетов сектора обеспечения качества высшего образования РА необходимо пересмотреть стратегии высшего образования, стандарты и критерии, процедуры и методологию обеспечения качества высшего образования РА и направить все усилия на улучшение качества образовательных услуг, тем самым сделав высшее образование РА более конкурентоспособным и привлекательным в Армении и в ЕПВО.

Ключевые слова: Европейское пространство высшего образования (ЕПВО), обеспечение качества высшего образования, секторальные проблемы обеспечение качества, Европейская рамка обеспечения качества, рамка обеспечения качества высшего образования РА.

Список использованной литературы

1. Будагян А., Саргсян Ю., Текущее состояние и перспективы реформ высшего образования в Армении в контексте Болонского процесса: Доклад. Национальный центр стратегических исследований высшего образования, Ереван, Принтинфо, 2012.
2. Хачатрян Р., Мовсисян Т., Проблемы институциональной аккредитации вузов РА в контексте интеграции в ЕПВО, «Образование в XXI веке» 1 (3), Ереван, 2020.
3. Хачатрян Р., Мовсисян Т., Особенности сочетания национальных и европейских критериев обеспечения качества в системе высшего образования РА, «Образование в XXI веке», № 2 (4), Ереван, 2020, с. 29-30.
4. Болонская группа, Отчет об инвентаризации Болонского процесса 2007, Лондон, 2007.
5. Европейская комиссия и др., Европейское пространство высшего образования в 2018 г.: Отчет о реализации Болонского процесса, Люксембург, 2018.
6. Европейская комиссия и др., Европейское пространство высшего образования в 2020 г.: Отчет о реализации Болонского процесса, Люксембург, 2020, с. 62-63.
7. Отчет ассоциации Европейского Союза, Тенденции V: Университеты, формирующие Европейское пространство высшего образования, 2007.
8. Стандарты и рекомендации для гарантии качества в Европейском пространстве высшего образования (ESG), Бельгия, 2015.

THE PRECONDITIONS FOR THE FORMATION AND DEVELOPMENT OF THE NATIONAL QUALITY ASSURANCE FRAMEWORK IN HIGHER EDUCATION OF THE RA

Khachatryan Robert
Brusov State University, Armenia
Movsisyan Tatev
Brusov State University, Armenia

Summary

The article presents the dynamics of the formation and development of the National Quality Assurance Framework of the RA and also clarifies the achievements, issues and challenges in the field of quality assurance in the context of the EHEA. According to the results of this research, Armenia has made great efforts to apply the European approach to quality assurance. At the same time, it should be noted that the issues in the quality assurance system of higher education are largely conditioned by the problems of legislative regulations of education, non-revision of licensing and quality assurance criteria as well as non-reflection of the current developments of the EHEA reforms in the QA processes. Thus, more comprehensive measures are needed to make quality assurance processes targeted and reflect current trends in them. The result of the research also depicts that though the European and Armenian frameworks have similar goals and have passed a rather long period of development, for the successful implementation of the priorities of higher education sector of the RA, it is suggested to review the Armenian higher education strategy, standards and criteria, procedures and methodology and to target the whole efforts towards improving the quality of educational services, making the higher education of the RA more competitive and attractive in Armenia and in the EHEA.

Keywords: European Higher Education Area (EHEA), higher education quality assurance, QA sectorial issues, European Quality Assurance Framework, National Quality Assurance Framework of the RA.

References:

1. Budaghyan A., Sargsyan Y., The Current State and Perspectives of Higher Education Reforms of Armenia in the Context of the Bologna Process: Report. National Center for Strategic Research in Higher Education, Yerevan, Printinfo, 2012.
2. Khachatryan R., Movsisyan T., Problems of the Institutional Accreditation of Higher Education Institutions of the RA in the Context of their Integration into the EHEA. "Education in the 21st Century" 1(3), Yerevan, 2020.
3. Khachatryan R., Movsisyan T., Peculiarities of Aligning the National and European Criteria of Quality Assurance in the Higher Education System of the RA. "Education in the 21st Century" 2(4), Yerevan, 2020, p. 29-30.
4. Bologna Follow-up Group. Bologna Process Stocktaking Report 2007. London. 2007.
5. European Commission, EACEA & Eurydice. The European Higher Education Area in 2018: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union. 2018.
6. European Commission, EACEA & Eurydice. The European Higher Education Area in 2020: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union. 2020. p.62-63.
7. European Union Association Report. Trends V: Universities Shaping the European Higher Education Area. EUA Publication. 2007.
8. Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ESG). 2015. Brussels, Belgium.

Материал был представлен и отправлен на рецензию: 22.03.2021
Принято к публикации: 12.04.2021
Рецензент: канд.пед. наук, доцент Грета Акопян

The material was submitted and sent to review:22.03.2021
Was accepted for publication: 12.04.2021
Reviewer: Assoc. Prof., PhD. Greta Hakobyan

37.03

РОЛЬ ЦИФРОВОГО ИНТЕЛЛЕКТА И ЕГО СОСТАВЛЯЮЩИХ В СОВРЕМЕННОМ ОБЩЕСТВЕ

Слюсаренко Нина Витальевна
Херсонский государственный университет, Украина
Кохановская Елена Викторовна
Коммунальное высшее учебное заведение «Херсонская академия непрерывного образования» Херсонского областного совета, Украина

Краткое введение. Сегодня тотальная цифровизация является необходимостью нашего общества. Это, в свою очередь, актуализирует наличие у человечества навыков и компетентностей, связанных с информационными и коммуникационными технологиями, которые выходят за рамки умения пользоваться цифровыми гаджетами. Именно поэтому одним из актуальных приоритетов для общества в целом и, в частности, для сектора образования является формирование цифрового интеллекта личности.

Стремительное развитие технологий, активное развитие когнитивного интеллекта (части искусственного интеллекта, которая в основном охватывает технологии и инструменты, позволяющие приложениям, веб-сайтам, ботам понимать, анализировать потребности пользователя на естественном языке), сокращение жизненного цикла профессий привели к деактуализации классической модели образования, на смену которой пришла концепция непрерывного образования (lifelong learning) [4].

Проблема. Следует отметить, что на интенсивность использования информационно-цифровых технологий в мире значительно повлияла пандемия COVID-19. Это влияние в